



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

U60  
✓ 797

1999

# ԱՆՁԱՅՆ ԿԻԹԱԹ


(ԺԱՐՔՆԱԿԱԿԻՑ ԵՐԳԵՐ.)



ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ

ԵՐԳԻՉ ԽԱՅԱԹՈՒԻ

1548.



Ա. ՂԷՆԱՆԻՐԱՆՆԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԳԷՈՐԳՅԱՅ Ա. ՍԱՆՈՅՆԱՆՑ:

1889

**ԻԻՐ**

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԶՕՐ

**ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

**ԱՇԸԳ ԶԱՀՐԻ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԼՈՅ**



ԻՐԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱՆ

**ՆՈՒԻՐԷ**

**ԽԵՅԼԹ-ՍՈՒՔԻԸՍ ԶԱՀՐԻՆՆ.**

Дозволено цензурою. Тифлисъ, 5 Сентября 1889 г.

Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ,  
на Бебутовск. ул., въ собствен. домѣ.

4797-60

29 799

## ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Ինքնավստահութիւնը չէ, որ ինձ մղում է դէպի Հայ գրահանութիւնը, և ոչ էլ ունեցածս ուսման չափն ու քանակութիւնը, որովհետև մի ինքնուս և Հազիւ ամենահասարակ գրել կարողալ իմացող մէկն եմ. այլ այն ջանքն ու եռանդը, որ արհեստիս միջոցաւ-զգացած ուրախ և տխուր բոլորներում ինքնին մըմնջացել-երգել եմ: Կարել ու երգել, լինչ գեղեցիկ բան. երկուսն էլ սպառուաբեր գեղարուեստ, երկուսն էլ մտածարական. մէկը Հաց մատակարարող, միւսը Հոգի, միտք, կամք և այլն ուրախացնող, զուարճացնող ու զարգացնող:

Միւսնոյն ժամանակ երկու արհեստ սովորել և դործագրել՝ կ'արդարացնէ այն Հայկական առածը, որ ասում է՝ «եղիու ժամի լուսարար՝ մէկին սևերես»». սակայն, այդ այն ժամանակ կը ճշմամարտուէր իմ վերաբերութեամբ, երբ երկուսն էլ զուգընթացաբար-հաւասարաչափ ուժերով առաջ տանէին միայն խիստապէս այդպէս չէ եղել:

Իմ իսկական արհեստը գերձակութիւնն է, որ անխափան դործադրում եմ. իսկ երգեր չօրինելու ձևերը, դեռ պատանի ժամանակից սովորած եմ հանդուցեալ հօրեցի և զանազան աշուղական գրուածքներ մտաուութեամբ կ'արդալով և լուրջ ուշադրութիւն դարձնելով երգերի այլ և այլ ձևեր և կազմութեանց վերայ:

Երգերս գրել եմ գլխաւորապէս ազատ ժամերիս, երբ երեկոները բանթող ենք արել—աշխատելուց դադարել ենք: Շատ երեկոներ ամբողջ ժամերով նստած գրել եմ, բայց ցերեկները երբեմնապէս պատահել են այնպիսի բոլորներ, որ կարելու ժամանակ սկսել եմ մտքիս հետ պատերազմել... կիսատ-պուատ մտքեր իրար դիմել ժողովել և վերջ 'ե վերջոյ



Ա Շ Խ Ա Ր Հ.



Ա խ, քեզանից արդեօք ո՛ւմ գնամ գանգատ,  
 Ո՛հ ցաւի տուն, մահի խորան, սուտ աշխարհ,  
 Անիրաւ, անխնամ, անգութ, անհաստատ,  
 Ունայն, անյուսալի, խտտան, սուտ աշխարհ:

Մշտակործան արիր անձս, անիրաւ,  
 Օրէ օր կ'բառնաս ցաւիս վերայ ցաւ,  
 Մի վայրկեան ինձ ուրախ չ'տեսայ բնաւ,  
 Անխղճմտանք և անսահման սուտ աշխարհ:

Չափ չ'թողիր տառապանքիս, ո՛հ, աւաղ,  
 Կորաւ բոլոր ոյժը կեանքիս, ո՛հ, աւաղ,  
 Չը գթալով արերսանքիս, ո՛հ, աւաղ,  
 Իսկ սուտ ես դու, ստի նման, սուտ աշխարհ:

Խայաթն եմ, շէն սիրտս աւեր շինեցիր,  
 Լուսապայծառ օրս գիշեր շինեցիր,  
 Անբոյժ ցաւերի հետ ընկեր շինեցիր,  
 Իսկ դարձուցիր պաշար մահուան, սուտ աշխարհ:



Գ Ա Ր Ո Ի Ն.

Ա խ, երբ պէտք է երևաս, ո՛վ դու գարունդ աննման,  
 Իմես երբեմն մեր աշխարհ ու գաս մեզ այցելութեան,  
 Տաքացնես երկիրը, վանես ցուրտը ձմեռուան,  
 Յօղես անձրևներ առատ, արդիւնաբեր, մշտական,  
 Ծաղկին դաշտերն ընդհանուր, հոտ բուրեն անմահական:


Մօտենալով վաղձանին բքաբեր Մարտ ամիսը,  
 Այցելութեանդ կապակէ ծերունի խեղճ Մասիսը,  
 Դէհ, ժամըն է, արձակէ, դալստեանդ աւետիսը,  
 Քաղցր ու անուշ հոտերով մեզ ընծայէ Մայիսը,  
 Ձիւնապատ լեռներուն էլ սփռէ կանաչ ցնծութեան:

Մառախլապատ ամպերով ծածկուած անտառները,  
 Արգելք եղան փարախից շուտ դուրս գալու գառները,  
 Երևում են խիտ ծաղկանց փոխարէն մացառները,  
 Նորոգուելու կսպասեն անբաթափ ծառները,  
 Թէ, երբ պէտք է մեզ վերայ արեգակդ առնէ շրջան:

Կարկաշահոս գետը լուռ հոսում է սառուցի տակ,  
 Երբ կը ծագէ պաշտելի Մասեաց սարէն արեգակ,  
 Հիւսիսային պող քամին, մինչ երբ փչէ շարունակ,  
 Ձմռան ոտիս դարունդ, արի՛ ու սար յաղթանակ,  
 Պարզ օդի մէջ ծածանի սուրբ դրոշակդ անկործան:

Աժբողջ տարուայ նախագահ, նշանաւորն ես գարուն,  
 Մնացեալ ամիսների դու փառաւորն ես դարուն,

Հողային դնդի պարծանք ու թագաւորն ես գարուն,  
Ազատութեան աւետիք բերող իսկ օրն ես գարուն,  
Դորա համար Խայաթն էլ փափագ ունի քո տեսեան:



4

Ի Մ Վ Ի Շ Տ Ը.

**Ա**խ, մի վայրկեան դեռ չելաւ, որ ես առանց նոր վիշտ մնամ,  
Կարծես թէ վճռուած է տառապանաց մէջ միշտ մնամ,  
Յաւերս շատ ու շատ են, մի կողմից էլ արկածները,  
Ճշմարիտ, ստիպում են, որ ես դեռ ամբարիշտ մնամ:

Անհալաւ, ոտաբոբիկ, քաղցած մնալս հոգ չէ ինձ,  
Բայց մահ է ինձի համար, որ ակամայ անձիշտ մնամ,  
Բացի Փրկչէն մի ուրիշ ինձի բժշկող էլ չկայ,  
Այս կենաց մէջ պէտքէ ես փրկութեանս ուիշտ մնամ:

Կեանք չը վարեցի առողջ մի կերպով Խայաթս տկար,  
Անցեալս միտ բերելով, երգեմ ու երաժիշտ մնամ:



5

ԽՐԱՏ ՍԻՐԵԼՈՅՆ.

**Ա**մեն մարդ ջանք է անում, որ լինի միշտ լաւ, սիրելի,  
Ընդհանուր աշխարհի մէջը քաջահամբաւ, սիրելի,

եւ կամ թէ մարդոց մօտը ջոկ արտօնութիւններ ունենայ,  
Ամենայն կերպով իրայ գարծերը իրաւ, սիրելի:

Բայց նոցա բռնած դիրքը համարեա զուր է, անուշիկ,  
Ըստարում ես իմ վերայ փորձ արի չեղաւ, սիրելի,  
Կունենայ մարդը թէ և սրտում նպատակ, կունենայ,  
Բայց առանց Աստուծոյ բան չի լինի բնաւ, սիրելի:

Յաւում եմ ես քո մասին, բայց դու տեղակ չես աննման,  
Խայաթուս թանգ խրատը զուր տեղը անցաւ, սիրելի:



6

ԱՆԿԻՐԹ ՄԱՐԴ.



**Ա**նկիրթ և անուսում, անզգայ մարդը,  
Կարգը ի՞նչ է, կանոնն ի՞նչ է, ի՞նչ գիտէ,  
Շահանդիր, եզուխտ, խաբեբայ մարդը,  
Ազգը ի՞նչ է, կրօնն ի՞նչ է, ի՞նչ գիտէ:

Ի՞նչպէս կը համարուի վատի հետ լաւը,  
Ձէ՞ որ կը որոշուի ճերմակից սեաւը,  
Պատահամբ բուրաստանն ընկնի ագռաւը,  
Վարդը ի՞նչ է, կոկոնն ի՞նչ է, ի՞նչ գիտէ:

Ո՛վ Խայաթ, նոքա են մելոր ու շուար,  
Որոնց գործն է անպէտք, իրանք անյարմար,  
Կամ ով որ չէ շրջել աշխարհներ օտար,  
Կանգունն ի՞նչ է, մղոնն ի՞նչ է, ի՞նչ գիտէ:

ԾՈՅԼ ՄԱՐԴԸ.



Աշխատողը կեանք կ'վարէ աշխարհին,  
Զուր կանցանի ժամանակը ծոյլ մարդուն,  
Անգործ մարդը միշտ տկար է աշխարհին,  
Եւ Աստուած է հակառակը ծոյլ մարդուն:

Միրտը արագաշարժ մի անիւ չունի,  
Նա և աջողութեան հետ հաշիւ չունի,  
Ոչ ոքի մօտ երբէք նա պատիւ չունի,  
Բողոքում է մինչ զաւակը ծոյլ մարդուն:

Անաշխատի տունը անհաց կը մնայ,  
Ոտքը բորիկ ու գլխաբաց կը մնայ,  
Նոյն ինքն օրերով քաղցած կը մնայ,  
Գարի հացն է լաւ կամակը ծոյլ մարդուն:

Ծուլութեան հետ բարի անուն չի գտնի,  
Համեօտ ապրուստ, լաւ կեցութիւն չի գտնի,  
Չ'աշխատելով հարստութիւն չի գտնի,  
Ձի աւելնայ մէկ ստակը ծոյլ մարդուն:

Հայ մուրալով ման դայ իբր աղքատ ճիշտ,  
Իւր խելքիցը միշտ կը քաղէ ցաւ ու վիշտ,  
Անաշխատը ձախորդութեան մէջն է միշտ,  
Իեւ չեմ տեսած աջողակը ծոյլ մարդուն:

Մըջիւնը ապրելու հոգս ունի իրան,  
Ամռանից կ'ամբարէ պաշարը ձմռան,  
Աշխատող մշակը կը դառնայ իշխան,  
Ձի կատարուի նպատակը ծոյլ մարդուն:

Ախուվախով կանցնի զօր ու զիշերը,  
Պարզ գունով չի վառի սրտի լապտերը,  
Երբ որ տեսնի աջողակ է ընկերը,  
Կը խաւարի արեղակը ծոյլ մարդուն:

Խրատողներ թէպէտ կ'լինի բազում,  
Սակայն չ'լսելով, չի էլ ամաչում,  
Բարի մարդոց վիճակին է նախանձում,  
Զուր կորչում է ժամանակը ծոյլ մարդուն:

Սուրբ զրբերը ծոյլն միշտ նախատում են,  
Խեղձութեան մէջ մնալը հաստատում են,  
Արքայութեան դուռը դէմը փակում են,  
Ահա այս է մեծ վստակը ծոյլ մարդուն:

Ջրուցելու խիստ ճարպիկ է և վարպետ,  
Մարդկանց հետ կը խօսի իբր վարդապետ,  
Ով որ յատուկ գործ ունենայ նորա հետ,  
Նա կ'տեսնի կեղծ զիմակը ծոյլ մարդուն:

Մահը ոչ ծեր գիտէ, ոչ երիտասարդ,  
Ամենի առջևը լարում է թակարդ,  
Պէտք է մեռնի անշուշտ ամենայն մի մարդ,  
Օտարք կառնեն վարչամակը ծոյլ մարդուն:


Ծոյլ մարդը թշուառ է և անընդունակ,

Իւր գործը վարում է նա միշտ հակառակ,  
Աղքատութեան մէջն է շրջում շարունակ,  
Հաստատուն չէ իսկ նաւակը ծոյլ մարդուն:

Սյուպիսիքը թէև ողջ են — կենդանի,  
Բայց նման են անասունի — անբանի,  
Մի օր մահը անշուշտ նրանց կ'տանի,  
Զի երևալ յիշատակը ծոյլ մարդուն:

Հեռուից տեսնողները կարծեն թէ՛ մարդ են,  
Բայց նրանք մարդկութեան մի յիմար գարդ են,  
Թէկուզ յետոյ քննէ, թէ կուզես արդէն,  
Երբէք չկայ նմանակը ծոյլ մարդուն:

Դու էլ զգուշացիր Խայսթի ներդիչ,  
Նախ ան, յետոյ այլոց եղեր խրատիչ,  
Տուած խրատներդ դու էլ պահէ քիչ,  
Մի՛ ճաշակեր օշարակը ծոյլ մարդուն:



Տ

ԽՆԴԻՐ ԱՌ ՍԻՐԵԼԻՆ.

**Ա**չացս լոյս, ան ծառայիդ նամակը,  
Բայց ու կարդա՛ շարունակը կիմանաս,  
Տես որքան քաշում է սիրոյդ փափաղը,  
Անմիջապէս բովանդակը կիմանաս:

Ներողամիտ դու գտնուիր, ո՛վ հանձար,  
Անձնուէրիդ նման չունիս սիրահար,  
Ծնողասէր Թեկլիի պէս անդադար,  
Լացը, կոծը, աղաղակը կիմանաս:

Միաք բերելով քոյ արածները կրկին,  
Ո՛րքան նստել արտասուել կ'աւանձին,  
Սիրաբորբոք, չէք Խայսթուս գրածին,  
Ուշ դարձրու՛ նպատակը կիմանաս:



Ծ

Ը Ն Կ Ե Ր.

**Ա**րարդդ դեռ արած չեն ինձ Պարսիկք, անիրաւ ընկեր,  
Դաւաճան մարդի պէս դառել ես արեանս ծարաւ, ընկեր,  
Քեզ նման անխիղճ ու անդուժ, անիրաւ դեռ տեսած չեմ ես,  
Թողել չես խղճալոյս սիրտը, որ մնայ առանց ցաւ, ընկեր:

Քաշելու այսպիսի տանջանքները պատճառ եղաւ ինձի,  
ես անարտունջ տանելով իմ բոլոր կեանքս հատաւ, ընկեր,  
Հալումաշ արիր ինձ օրըստօրէ, ո՛վ դու առիթ մահուան,  
Ծնած չէ աշխարհում երբէք քեզի պէս վատ բնաւ, ընկեր,

Քեղանից աղատուելու ինձի քիչ թէ որ հնար լինէր,  
Հարազատ ծառայ կլնէի այլոց դուռը, իրան, ընկեր,  
Խայսթուս տառապանաց փոխանակ քեզի դատաստան կայ,  
Տիրոջ մօտ սևերես կերթաս, կը դառնաս ապաշաւ, ընկեր:

10


ՍԷՐ ՍԻՐԵԼՈՅՆ.



Արի՛, ո՛ւր ես, արի՛, ո՛վ իմ սիրելի,  
 Սիրովդ երերուն, անդադար եմ ես,  
 Տեսնելու կ'սպասեն աչքերս քեզի,  
 Քո իսկ սուրբ սիրովդ շանթահար եմ ես:

Մրտումն բորբոքուող սիրոյ կրակ կայ,  
 Ծովերով չեն մարիր, այլ նպատակ կայ,  
 Գիտեմ, որ կերևիս, բայց ժամանակ կայ,  
 Սակայն սիրոյդ մէջը խելադար եմ ես:

Արի՛, հասիր, արի՛ Խայաթուս կեանքը,  
 Զէ՛ սիրոյդ պատճառաւ է այս իմ ջանքը,  
 Մինչ երբ թերի մնայ սրտիս բաղձանքը,  
 Կրացուր սիրելիս, բաւ աշխարհմ ես:



11

Ս Է Մ Ա Յ Ի.

Արի՛ իմ անուշիկ ու անման բարձրահասակս դու,  
 Աղեղունք, սևաչեայ, քաղցրահայեաց ով եղջերակս դու,  
 Լուսափայլ, անշամանդաղ, աւետարեր արուսեակս դու,  
 Գոնէ անմիջապէս շուտով կիմանաս նորատակս դու:

Գիտեմ, ես վաղ կ'մեռնեմ, մէկ ականջ դիր իմ կտակս դու,<sup>1)</sup>  
 Պահէ այնուհետեւ ազնիւ աւանդս-յիշատակս դու:<sup>2)</sup>

Իմ այսքան քեզ սիրելոյս փոխարէն դու սէր չունիս հաստատ,  
 Ել ի՞նչպէս քարասիրտ-անդու թ քեզանից ես չանեմ գանգատ,  
 Գլթած լըր երբեմն սիրահարիդ, ո՛վ դու շքեղ անհատ,  
 Ունիմ քեզ յայտնելու, իմ նազելի, գաղտնի խորհուրդներ շատ..

Է՞ր այդպէս հեռացար ինձնից, դեղանի, ցաւ թողիր ինձի,  
 Թուցիր աղանի-սուրբ սիրտս ու ազոաւ թողիր ինձի,  
 Սէրի ծովումն էի ես՝ դուրս արիր, ծարաւ թողիր ինձի,  
 Յաւեր ու հաղարաւոր վեշտ կրակներ լաւ թողիր ինձի.....

Հիմայ որքան խաւարի մէջ մնամ, լոյսս դու ես վերջին,  
 Նորահաս-անթառամ բողբոջ, կանանչ բոյսս դու ես վերջին,  
 Յուսամ անբաղդ Խայաթս, իսկ խրախոյսս դու ես վերջին,  
 Քանզի ուրիշ ոչինչ չունիմ, միակ յոյսս դու ես վերջին....

12

Ո Ի Ս Ո Ի Մ.

Արի՛, հոգոյս չափ սիրելի ուսում, իմ ուսուցիչն ես դու,  
 Խաւար մտացս բանալի, նա և դեղ հասուցիչն ես դու,  
 Տղայամիտ սրտիս խորհուրդներուն տաքացուցիչն ես դու,  
 Փափուկ սրտիս դալար բոյսերը աճող բուսուցիչն ես դու,  
 Քու սիրովդ վառուած մանկանց միակ լեացուցիչն ես դու,<sup>1)</sup>  
 Ամբողջ մարդկու թեան պահպանող, իսկ զօրեղ կեցուցիչն ես դու:<sup>2)</sup>

1) 2) Ամենայն տանց վերջում կրկնէ չեղեալ տողերը:

1) 2) " " " " " " " "

Աւարդ, իմ ծնած օրից տակաւին քօղապատ է սիրտս,  
Դու ես ինձ կրթութիւն տուողը, կրթէ-փարատէ սիրտս,  
Չունի քեզի հետ հաղորդակցութիւն, խիստ վհատ է սիրտս,  
Ափսոս որ ճաշակիղ մասնակից չէ, ու աղքատ է սիրտս....

Ծրարեալ-կնքուած, պահուած է ինձանից նամակը ուսման,  
Կենացս մէջ չեմ մոռանալ, երբէք այն փափազը ուսման,  
Վասն զի օրէնք է մեզի կարգալ միշտ տախտակը ուսման,  
Թէպէտ ես արժանի չեղայ ըմպելու բաժակը ուսման.....

Ա՛ռ, ընկալ, թող քու մէջդ զանի հոգիս...կրթարան բազմաց,  
Խաւարիս պանծալի այցելութիւն տուր, վարժարան բազմաց,  
Դու ես կոյր մտքերու ստուերը վանող, ճեմարան բազմաց,  
Խայթթու հոգու աչքը բաց արա, ո՛վ քերական բազմաց....



ԱԽՈՒՐԵԱՆԻ ԱԼԻՔՆԵՐԸ.



Ախուրեան զետի պղտոր, արիւնոտ,  
Ալեաց մէջ ընկած՝ լողում էր-լողում,  
Ո՛հ, մի չնաշխարհիկ, չքնաղ դիցուհի:  
Կիսաշունչ ձայնով օգնութիւն խնդրում:

Թոյլ և ուժասպառ, անպօր թեկերով,  
Մաքառում էր ընդ կատաղի ալեաց,  
Մեկթ խորասուզվում ու մերթ բարձրանում,  
Մերթ արձակում էր հոռաչանք ու լաց:

Գետի ափերում կային մարդիք շատ,  
Բայց չէին մէկ տեղ, այլ ցաքուցրիւ,  
Երբ դժբաղութեան լուրը տարածուեց,  
Օղնութեան հասան մարդիք անհաշու:

Նոյն իսկ հիւրատեաց, տղմոտ ափերը,  
Պատրաստել էին դարան քաջերին,  
Ի՞նչ անէր կտրիճ այն տղամարդը,  
Երբ նա չէր կարող մօտենալ դետին:

Թէև եռում էր երակների մէջ  
Արիւնը, ինչպէս ջուրը կաթսայում,  
Բայց ՚իզուր, հեռուից սևեռել էին  
Աչքերը դժբաղդ զոհին, ափսոսում:

Անգութ, անգագայ գետը ահաւելի,  
Վիշապի նման Փշշում էր ուժգին,  
Կարծես անգութը մահ էր սպառնում,  
Տալ խեղճ ու անձար թշուառ ամբօխին:

Բոլորի սիրտը ընկել էր մի դող,  
Այն արիւնարբու զետի սարսափից,  
Ոչ ոք օգնութեան ձեռք չ'կառկառեց,  
Աղաւնին փրկել բաղէի ճանկից:


Իսկ անմեղ զոհը դեռ կիսակենդան,  
Ձեռքի շարժումով կամէր հասկացնել,  
Թէ «չկայ արդեօք մի անձնուրաց մարդ,  
Չանա թշուառիս փրկել-աղատել»:



Բարեկենդանն եկաւ, խեղճ մարդն ի՞նչ անի,  
 Ամբարումը մի բուռ ալիւր էլ չկայ,  
 Հարուստն ունի հաց, իւր, ձուկ, խորված, զինի,  
 Աղքատի տունն անժուռ ապուր էլ չկայ:

Խեղճ մարդի արևը շրջում է խաւար,  
 Չունենալով վառելափայտ ու աղար,  
 Յանկարծ մի զոնազ գայ, պատուելու համար՝  
 Իրնձի փոխարէն, բլղուր էլ չկայ:

Խայաթ, աղքատութեան ծովն է անյատակ,  
 Նորա մէջ ընկնողը երկար ժամանակ-  
 Զգելով ձեռքերը միշտ աջ և ահեակ,  
 Ապաւէն դտնելու, փրփուր էլ չկայ:



(Ըստ եղանակի «Հայրեկ ասաց դուստրը հօրը» երգին:)

Բացուիր լուսին դու գերբնական, մինչէրբ մնաս ամալի տակ,  
 Կարծես մեզ հետ տխրել է քոյ հորիզոնդ ընդարձակ,  
 Ահա այսքան դարեր է որ, թափառում ենք աստ և անդ,  
 Հայրենիքից զըկուած, օտար երկիրներում միշտ հիւանդ:

Կորուսելնք մեզ հայրենիք տանող զիծը, ո՞վ լուսին,  
 Դեհ դուրս արի, դուցէ գտնենք քոյ շնորհիւ վերստին,  
 Մեր հայրենի հողնց հեռու մնացել ենք աստ պանդուխտ,  
 Իսկ քեզանով կը կատարուի մեր սուրբ բաղձանք, իղձ և ուխտ:


Արի, լսիւ մեր լաց ու կոծ, մեր աղաղակ այս զիշեր,  
 Մեր ծնողքը մեզ կսպասն արտասուելով անհամբեր,  
 Դէպի երկինք ուղղել ենք մեր արտասուածոր աչքերը,  
 Թէ էրբ պէտքէ ցոյց տաս արդեօք քոյ հրաշալի պատկերը:

Թոյլ տուր հասնեմ իմ զաւակաց ու զրկելով համբուրեմ,  
 Թերափափազ օտար երկրում թշուառ կեանքս չկնքեմ,  
 Ինչպէս այստեղ ննջել է մեր հայրենիքից մէկ աղայ,  
 Դերեզմանի խորքերից միշտ հողօցնելի ձայն կգայ...:

Յանկարծ ծաղեց մեզ վերայ մի աւետաբեր լոյս աղօտ,  
 Այրիկենական եղաւ նա էլ, չտեւեց մինչ առաւօտ,  
 Անմիջապէս հիւսիսային մթնադոյն սև ամպերը,  
 Կարծես խորհուրդ էին արեւ՝ ծածկել լուսնի պատկերը:

Դեհ շուտ արա՛, անմահ լուսին, ամպերի տակ մի մնայ,  
 Նայիր, քեզն շրջապատող աստղիկներն էլ չեն ցօլայ,  
 Մենք սրտազին սպասում ենք քոյ բացուելուդ, ո՞վ լուսնակ,  
 Թող քեզանով ապրի, շնչէ՛, ամենայն մի թոյլ էակ:

Խ Ա Յ Ա Թ.



ԸՆԿԵՐԱՏԵԱՅ.

**Բ**աւական է, զղջա՛, ո՛վ ընկերատեսց,  
 Զէ՛ որ աշխարհը քեզ յատուկ չի մնայ,  
 Թէ և արժանի չես դու ոչ մի բարեաց,  
 Գիտցիր, բաղդը քեզ էլ նեցուկ չի մնայ:

Աշխարհը կողոպտես ու առնես աւար,  
 Բաղձանքդ դարձեալ կը մնայ անկատար,  
 Ուրիշներից օրինակ առ, այ՛ յիմար,  
 Ամեն անգամ բաղդդ մանուկ չի մնայ:

Աշխարհն ունի մէկ քանի հատ աստիճան,  
 Ոմանք վայր գլորան, ոմանք բարձրացան,  
 Մի օր էլ իմ բաղդս նոր լուսնոյ նման,  
 Նորոգութիւն կառնէ, ծերուկ չի մնայ:

Կարծես վերացել է աշխարհից սէրը,  
 Ո՛վ Խայաթ, ի՛նչ անէ խեղճ անձնուէրը,  
 Թող լաւ գիտնայ անխիղճ զրամատէրը,  
 Թշուառ գիտունն՝ իրան ստրուկ չի մնայ:



ԱՆՅԵԱԼԻ ՅԻՇԱՍԱԿՈՒԹԻՒՆ.

**Բ**ռնութեան սուր ճանկերը, երբ չէր խրած իրանի մէջ,  
 Գտնվում էինք կենաց այն գեղեցիկ շրջանի մէջ,  
 Խաւար փոխուեց անցեալը այս աննախանձ ներկայի մէջ,  
 Վարդեր էինք սպասում թէ և ապագայ փառքի մէջ,  
 Բայց նա որո՞մ ցանեց շուտով մեր նոր բուրաստանի մէջ:

Մեր երևակայութեան մէջ ժպտում էր մեր ապագան,  
 Ամենայն մարդ իւր գործերում տեսնում էր յուսոյ նշան,  
 Որը երբէք չէ մոռացվում, յիշելի է յաւիտեան,  
 Վարդեր էինք սպասում.....

Ես է որ անջնջելի, մի լուսաւոր բիծ է թողնում,  
 Մարդուս կեանքի՛ մէջ մշտական յիշվում է, չի մոռացվում,  
 Որպէս զի նա մխիթարիչ լինի դառն բուսում,  
 Վարդեր էինք սպասում.....

Երջանիկ էինք և աղատ խօսում-ասում ու երգում,  
 Եւ մեզի շրջապատող ընկերների հետ զուարճանում,  
 Թշնամութիւն, նախանձ, երբէք բաղդից չէինք սպասում  
 Վարդեր էինք սպասում.....

Խ Ա Յ Ա Ք.



1548.

ՄԻԻՍԵՅՁԷՏ.

Քարունըն, էհաս պարտէզն իմ փակ մնաց այսպէս,  
 Կեռ խակ մնաց այսպէս,  
 Ոհ, ի՞նչ օրինակ էր, որ աւերակ մնաց այսպէս,  
 Արձակ մնաց այսպէս:  
 Բերձունքը զանազան սորա, բայց պարտէզը փոքրիկ,  
 Պտուղներն քաղցրիկ.  
 Քաղուելու մօտ էր ու անժամանակ մնաց այսպէս,  
 Դարդակ մնաց այսպէս:  
 Արթնցի՛ր ո՛վ հարաւ, արի պարտէզումս հընչէ,  
 Այլ և մի՛ մեղանչէ,  
 Բաւ չէ՞ պարտէզիկս փոքրահասակ մնաց այսպէս,  
 Բարակ մնաց այսպէս:  
 Ամեն առաւօտ մերձ արի, հնչէ անուշիկ հով,  
 Որ բողբոջի քնզնով,  
 Ամպով է պատած ու անարեգակ մնաց այսպէս,  
 Մմակ մնաց այսպէս:  
 Անբաղդ Խայաթս երգում է սոխակի պէս անվերջ,  
 Տունկերըն են ստերջ,  
 Իգուր է չարչարվում, նա անվաստակ մնաց այսպէս,  
 Իստակ մնաց այսպէս:



ԳԵՂԵՑԿՈՒՀԻ.

Բեղեցիկների մէջ նմանդ արդեօք  
 Ստեղծե՛լ է Աստուած, սիրունիկ քեզ պէս,  
 Սշխոյժ, ուրախադէմ և մշտածիճալ՝  
 Ձէ ծնած աշխարհում մէկ հատիկ քեզ պէս:  
 Վերջապէս մաղնիս ես զու բոլորովն,  
 Աչքերդ արեգակի, ճակատդ լուսին,  
 Քեզ անխնայ կտայ կեանքը թանկագին,  
 Ով տեսնի քաղցրախօս, անուշիկ քեզ պէս:  
 Քոյ Խայաթն եմ, տար ինձ մասնաւոր խնամ,  
 Հոգս արա իմ մասին, ո՛վ վարդ անթառամ,  
 Եղեմեան պարտէզն էլ չէ ծնած անգամ,  
 Հոտաւէտ ու քնքուշ մի ծաղիկ քեզ պէս:



ԽՈՐՀՐԻԱՇՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բատողութեանդ բնաւ,  
 Ձեմ հակառակ, ճշմարիտ,  
 Սակայն գիտցի՛ր, աւազը՝  
 Ձի փոխարկուի մարգարիտ:

Իմ անձանօթ բաղդը ես,  
Քսան և ութ տարի է  
Փնտրուելով չը գտայ,  
Ասի վերջը բարի է:

Իմ բաղդը ու՛մ որդին է,  
Կամ ո՞վ է՝ չեմ ճանաչում,  
Նա մեր տունը հիւր դալով,  
Չեմ տեսած և չեմ յիշում:

Ոչ բաղդ ունիմ, ոչ ուսում,  
Ոչ մի կողեկ հայրական,  
Երբ չ'աշխատեմ ո՞վ կտայ՝  
Իմ ապրուստը օրական:

Փոքր 'իշատէ հասկացող,  
Ուշ դարձուր ինձ, հողի ջան,  
Բայց ձեռքիցս ի՞նչ կգայ,  
Երբ ես չունիմ օգնական:

Շատ մարդիկ՝ շատ նպատակ  
Ներ են ունեցել իրաւ,  
Չի կատարուիլ, չի եղել,  
Եւ չէ լրացել բնաւ:

Թող ամբոխը մեզ վերայ,  
Մէկ ժամանակ ծիծաղէ,  
Բայց տեսնենք թէ աշխարհը,  
Յառաջ ու՛մ պէտքէ թաղէ:

Խ Ա Յ Ա Թ.



21

Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ.

**Ի**էհ, շուա արա ու վերկացիր,  
Ո՛վ դու դաստիրակ ազնիւ,  
Մանկանց դասը տեղեկացիր,  
Թէ կը գրե՞ն նամակ ազնիւ:

Մարդկանց խրատիչ պատրաստէ,  
Նրանց թուղթ, գրիչ պատրաստէ,  
Կրթեալ ուսուցիչ պատրաստէ,  
Որ ունենան վիճակ ազնիւ:

Նախ դու նոցա ճէր քարոզէ,  
Խայթո՛ւս հետ սէր քարոզէ,  
Ուսեալ տղին՝ բեր, քարոզէ,  
Խաչը՝ ոսկի, մանեակ ազնիւ:



22

Ա Ր Հ Ե Ս Ս Ա Ի Ո Ր.

**Ի**ու բազմաչարչար խեղճ արհեստուոր,  
Փչացնելով քոյ կեանքդ բոլոր,  
Ոսկի ժամերդ ծախելով աժան,  
Գիւտեր ես անում անդին՝ պատուական,  
Բայց չին ճանաչիլ պատիւդ երբէք,



Հրաշանորոգ իմ գովականս,  
Ով դու վսեմ անդուգականս:

Արեգակից շատ պայծառ ես ազնիւ,  
Ծնորհալի ու անձառ ես ազնիւ,  
Բողջոջաղարդ ու նոր ծառ ես ազնիւ,  
Նորածին ու հեզիկ զառ ես ազնիւ,  
Նրանի մօտս բարբառես ազնիւ,  
Պարկեշտ ու կատարեալ հոգիջանս:

Կենաց ծառ ես, իսկ անթառամ ինձի,  
Խորիսխից համեղ, քաղցրահամ ինձի,  
Մարդիք քոյ մասին, կիմանամ ինձի  
Նրանի կտան, յարաժամ ինձի,  
Զիք քեզի նման բարեկամ ինձի,  
Ազնիւ, հարազատ, վեհ հոգեհանս:

Օրըստօրէ բացուող ծաղիկ ես դու,  
Ամեն մի բանից անուշիկ ես դու,  
Մինչ արեգակից գեղեցիկ ես դու,  
Աշխարհի միջին անդրանիկ ես դու,  
Թէ և հրեշտակից փոքրիկ ես դու,  
Բայց սէրդ ինձի մազնիս է, կեանս:

Ողջ աշխարհի արեգակը քեզնից,  
Խաւար մնաց, ամպի տակը քեզնից,  
Արուսեակն ու փայլակը քեզնից:  
Նրկնչում է լուսնիակը քեզնից,  
Աշխարհի միջին կայծակը քեզնից,  
Վախում է ձայն տալու լուսականս:



Երանի տեսնէի ես ընդհանրապէս,  
Հայրենեացս վեհ հովիտը ծաղկալի,  
Տխուր սրտիս միայն նա լինէր հանդէս,  
Քանզի չունիմ իրանից զատ ցանկալի:

Չունիմ ուրիշ խորհուրդ, չունիմ նպատակ,  
Սյս է իմ բաղձանքս, այս է միայնակ,  
Նրբ ծաղկած կը տեսնեմ դունով համարձակ,  
Կը թափեմ ինձանից փոշին ախրալի:

Էլ ի՞նչ փոյթ է մահը ինձ այնուհետև,  
Նրբ մեր հովտում ծագէ նոր պայծառ արև,  
Խայտի երգիչիս 'ի վերուստ պարգև՝  
Տէրը թող տայ, սրտով մնամ բերկրալի:



Երբ ճեմելով դէպ ինձ կուգայ նազելիս,  
Նորոգութիւն կառնէ հնացած սիրտս,  
Կագատէ քաղցրախօս լեզուաւ սիրելիս,  
Տրամուլթեան բանդի մէջ մնացած սիրտս:

Նազելիս պերճախօս, ամենաշքեղ,  
Կնացքը նազաճեմ, պտոյտը անմեղ,  
Երբ գտնուինք մենք երկուսս միատեղ,  
Հրճուելով կը վարժնի քնացած սիրտս:

Տեսնելով Խայաթս նրա նիրհումը,  
Անշարժ կը քնանամ սիրոյ գրկումը,  
Ոգեշունչ բառերով քաջալերումը,  
Յետ կը բերէ ձեռքից գնացած սիրտս:



ԽՕՍԲ ԸՆԴ ՁԵՓԻԻՌԻՆ.

Զեփիւռ, թէ հայրենիքս զնալու ես մէկ նամակ տամ տար,  
Արիւն ու արտասունքով զրածս, քնկած ու փակ տամ տար,  
Փտեցաւ խոնաւութեան մէջ իմ աչացս արտեանունքը,  
Փոխարկուած լոյս ցերեկս մութ գիշերուան, օրինակ տամ տար:

Չեկաւ անմխիթարիս մխիթարիչ լուր, փափազս սունեմ,  
Պատանի հասակիս մէջ սեաւ մագերս սպիտակ տամ տար,  
Բոլոր երջանիկ աշխարհիցը միշտ ուրախ ու շէն սիրտս,  
Հիմքիցը խախտուած, քակուած, հնացած, աւերակ տամ տար:

Երազում տեսնումեմ միշտ իմ ճնողացս ծով արտասունքը,  
Խայաթս նոցա իբրև ընծայ մէկ թուխ թաշկինակ տամ տար:




ՁԵՓԻՌ.



Զեփիւռ, այս նամակը տար սիրականիս,  
Կիտեմ, անմխիթար լինելը չիտէ,  
Մէկիկ մէկիկ պատմէ այն հոգեհանիս,  
Իւր մասին խելագար լինելս չիտէ:

Այլոց խօսքը թէ և անտանելի է,  
Բայց սիրոյ կրակը անմարելի է,  
Նա դեռ մինչև հիմայ շատ կարելի է,  
Իմ իրեն սիրահար լինելս չիտէ:

Թէ և սիրահարներ եղել են, իրաւ,  
Բայց չեն նրանք Խայաթուս պէս սիրոյ զրաւ,  
Մի վայրկեան դուրս չիգայ մաքրիցս բնաւ,  
Անքուն ու անդադար լինելս չիտէ:



ԲՈՂՈՔ ԱՌ ՍԻՐԵՂԻՆ.

Եր այդքան ո՛վ անիրաւ, ծառայ կրէ ցաւ անողորմ,  
Մէկ արի այցելութեան, դուցէ լինի լաւ՝ անողորմ,  
Անողորմաբար զրկիր խղճիս վերայ դաւ՝ անողորմ,  
Բեղ չէ վայել որ մնաս խեղ, անապաշաւ՝ անողորմ,

Գեռ չի ծնուած աշխարհում քեզ պէս անիրաւ՝ անողորմ <sup>1)</sup>  
Ինձ համար լայն աշխարհը արիր քարանձաւ, անողորմ, <sup>2)</sup>

Երանի թէ ես քեզի չէի սիրած, ո՛վ անխնամ,  
Լոկ լեզու ունիս միայն, հոգի դրաւող, քաղցրահամ,  
Ո՛հ, քեզ նման անգուժից, արգեօք ես ո՛ւմ գանգատ գնամ,  
Գոնէ բաց վառ երեսդ, տեսնելով քիչ ուրախանամ....

Գրուած են լիակատար քոյ արարքդ մէկիկ մէկիկ,  
Որ այրում, տոչորում են լեարդս ու սիրտս անմեղիկ,  
Հալումաշ արիր, աւա՛ղ, կեանքս ու հոգիս իբրև ծաղիկ,  
Իմ և քոյ դատը միայն Փրկիչդն անէ անդրանիկ....

Ռուն գոռոզ, ինքնահաւան, սաստիկ փառասէր ես, գիտեմ,  
Անիրաւ, ցաւիս վերայ ցաւեր պէտքէ բերես, գիտեմ,  
Խղձալի Խայաթուս էլ մի օր պէտքէ գերես, գիտեմ,  
Մինչ անգամ թէ ինչ խղճի, կամ ինչ հոգու տէր ես, գիտեմ..



ՆԵՐԿԱՅԻՍ ՊԱՀԱՆՁԸ.

**Ը**նտանեկան ծանր լուծը օրէ օր  
ձնշում է քեզ, խղձալի արհեստաւոր,  
Գարուս հոգին որքան փոխուած կ' տեսնեմ,  
Ոչ այնքան ինձ, որքան որ քեզ կափսոսեմ:

1), 2). Ամենաչն տանց վերջում կրկնէ չեշեալ տողերը:

Ուրեմն դու ճակատադրիդ յանձնուիր,  
Եւ աշխատիլ ջանա կրկին ժիրաժիր,  
Մինչև տեսնենք թէ բանը ուր կ' հասնի,  
Տա՛ր այդ լուծը, տա՛ր սիրով, մի վհատիր:

Եւրոպան իւր օգուաներին-շահերին  
Հետևելով՝ ծանօթացաւ Հայերին,  
Երբ մի հոգս է ընկնում Եւրոպայ,  
Կարձ միջոցում տեսնում ես մեր երկրում կայ:

Պատկառելի մեր տիկնայքը կաղ 'ի կաղ,  
Հետևում են չար մտային անյապաղ,  
Նրանք չիտեն խեղճ ամուսնու վեճակը,  
Կուզեն միայն լցնել իրանց փափազը:

Երբ չէր մտել այդ վատ մտտան քոյ առնը,  
Կարծեմ այն օրն էր քոյ կենաց դարունը,  
Խեղճ մարդ հիմա հասակդ առար-ծերացար,  
Գերդաստանդ մեծացաւ՝ դու յետ ընկար:

Աղջկերքդ ու քոյ կինդ ամեն օր,  
Մօտնի շորեր պահանջում են նոր 'ի նոր,  
Արու գաւակ չունիս, ափսոս, քեզ օգնող,  
Եւ քոյ բազմաթիւ ցաւերիդ կարեկցող:


Բայց դու գիտես քոյ վաստակը խղձալի,  
Թափելով ջերմ աղի քրտինք սոսկալի  
Ամբողջ օրը աշխատում ես անդադար,  
Պարզ կեցութեան միջոց ճարելու համար:

Մեղուի նման ճախրում ես միշտ դէս ու դէն,  
 Բաղըր հիւթեր հաւաքելով ծաղկունքէն,  
 Երեկոյեան երբ դու յողնած տուն երթաս,  
 Հոգոյս ընկեր ի՞նչեր արդեօք կիմանաս:

Դեռ մի պատուռ հաց չը բերած քո առջև,  
 Անմիջապէս խաւարում է քոյ արև,  
 Կինդ՝ ոսկի ապսրանջան է ուզում,  
 Իսկ աղջկդ՝ մի շաբթ գոհար պահանջում:

Դու հազիւ հազ աշխատում ես հացի փող,  
 Շէն դրացուդ ի՞նչպէս լինիս հեռուդ,  
 Լաւ է մեռնել այս աշխարհից հեռանալ,  
 Քան թէ այժմեան զխտութեան հետ միանալ:

ԽԱՅԱԹ.



ՊԱՆԴԻՍԻ ԱՆՁԿԱՆՔԸ:



Թողած իմ ծնողք, թողած ազգականք,  
 Ընկած եմ օտար աշխարհում պանդուխտ,  
 Զուրկ ամեն բանից ու անմխիթար,  
 Ճնշուած հողով՝ մարմնով զերթ ապուխտ:

Սրտաբեկ, տխուր նստած միայնակ,  
 Մորմորում եմ ես ամեն ժամանակ,

Բարախուն սրտիս խորքերից հոգոց  
 Հանելով՝ կուլամ ձեռքերս ՚ի ծոց:

Երբոր կը յիշեմ իմ անցեալները,  
 Միսս ինձ վերայ փշաքաղվում է,  
 Աղի արցունքը իմ աչքերիցս,  
 Գետակի նման առատ հոսում է:

Ո՛հ ես յուսահատ անիծում եմ միշտ,  
 Այս սև օրերը, կրելով ցաւ, վեշտ,  
 Ա՛խ, կեանքի խաչը օտար ինձ գտաւ,  
 Ու իւր ունեցած վրէժը առաւ:

Գլուխս դրած լուռ՝ քարի վերայ,  
 Մահուան սարսափից սաստիկ դողում եմ,  
 Անմահ կտրօտից կազմելով նաւակ,  
 Տրամուլթեան ծովը վերայ լողում եմ:

Երկինք, ո՛վ երկինք, մի՛թէ դժբաղդիս,  
 Մասնաւոր խնամ տանել չ՛ կամիս,  
 Որ քոյ շնորհիւ դնամ հայրենիք,  
 Տեսնեմ իմ ծնողք, եղբայրք ու որդիք:

ԽԱՅԱԹ.



ԿԵՂԾ ԵՐԻՏԱՍՍՐԴ.



Ժպիտը դէմքից խապառ վերացած,  
Խորշոմներով լին պատկերը դաժան,  
Այսօր մի ծերուկ տեսայ զարմացայ,  
Ծերուկ ձեւացնել չէր ուզում իրան:

Հագել էր հանդերձ երիտասարդի,  
Որ բոլորովին չէր իրան յարմար,  
Երեսն ասիլած, ներկուած մազերով,  
Երջում էր այդին բարակ ու երկար:

Յանկարծ նա տեսաւ մի գեղեցիկուհի,  
Նազելով անցաւ իրա առջևից,  
Հարց ու փորձն ընկաւ, թէ ո՞վ էր արդեօք,  
Բայց չառաւ հաստատ պատասխան մէկից:

Կարծես նա իսկոյն սիրահարուեցաւ,  
Արագ քայլերով հեռեեց նրան,  
Հեռեեալ օրը պատգամ ուղարկեց,  
Խնդրում էր ձեռքը սիրուն աղջկան:

Ծեր-երիտասարդն շուտով կաշառեց,  
Տան մեծ ու փոքրին ընծաներ տալով,  
Անմեղ աղջկայ արիւնը ծախուեց՝  
Մի քանի չնչին ոսկի արծաթով:



Ք Ի Ս Կ Ո Ի Հ Ի.



Իմ գեղեցիկ, իմ աննման իսկուհի,  
Աշխարհում չէք քեզն նման իսկուհի,  
Դու մի ծառ ես եղեմական իսկուհի,  
Հոտ կը բուրես անմահական իսկուհի,  
Արժան է քեզ տալ զովասան իսկուհի,  
Ազնիւ ես իսկ ու պատուական իսկուհի:

Իսկ հարազատ տոհմից ես դու, հոգի ջան,  
Ամբիճ կաթով սնուած, հրու հոգի ջան,  
Քաջասիրտ ես ու ահարկու հոգի ջան,  
Անհուն ցաւերիս լեր հասու հոգի ջան,  
Այցելութեամբդ քոյ փոքու հոգի ջան  
Տուր ինձ շուտով դեղ ու դարման, իսկուհի:

Դեռ չէ ծնած քոյ նմանակ աշխարհին,  
Միայն դու ես մին օրինակ աշխարհին,  
Փայլում ես որպէս արեգակ աշխարհին,  
Պայծառաշող իբր աշտանակ աշխարհին,  
Մէկ անդրանիկ ես բովանդակ աշխարհին,  
Ճարտարախօս և գերբնական իսկուհի:

Ճմարտասէր խաղաղարար ես իրաւ,  
Ճմարտութեանը սիրահար ես իրաւ,  
Բարեհամբու մարդոց համար ես իրաւ,

Ամեն բանով լիակատար ես իրաւ,  
Ապագային ինձի սատար ես իրաւ,  
Քոյ Խայաթուդ լեր օգնական իսկուհի:



34

ԱՆՀԱԻՅՏԱՐԻՄ ԸՆԿԵՐ.



Իմ ձախորդ օրերից հալածուած ընկեր,  
Արի՛, ո՛ւր ես, այժմ աջողակ եմ ես,  
Գտիր քեզ պէս մի քանիսն էլ հեադ բեր,  
Քանի որ բաղդիս մօտ ընդունակ եմ ես:

Իմ անցեալ վիճակը գտել եմ հաստատ,  
Գարձեալ այն շռայլն եմ, մի կարծեր ժլատ,  
Ո՛ւմ ճարեցիր խելքը թեթեւ, փողը շատ,  
Որ մոռացար ինձի, անսեղեակ եմ ես:

Անձնուէր Խայաթուց՝ հարազատներդ,  
Ինչո՞ւ հեռացրիք պատուիրաններդ,  
Անկատար չի մնայ հրամաններդ,  
Ձեզ պէս ընկերներին հպատակ եմ ես:



35

Ա.Ռ. ՍՈՒԱԿՆ



Ինն ամիս անցուցիր գարուն ձեռք բերիր, \*)  
Բերիր գարնան նշան, խոր քնէդ զարթիր,  
Չարթեցուր ընկերներդ՝ նոցա հետ բերկրիր,  
Բերկրեցաւ բնութիւնն քաղցրախօս սոխակ:

Սոխակ, Ապրիլն եկաւ ու քեզ աւետեց,  
Աւետիս կարդալով՝ պարտէզներ բացեց,  
Բացուան առուակները ու ջրեր վաղեց,  
Վազ սուր դէպի պարտէզ և տես մանուշակ:

Մանուշակն, ես գիտեմ, քոյ սիրելիդ չէ,  
Չեն և ուրիշ ծաղիկնք, պերճ նարդոսն էլ չէ,  
Չէ՞ որ Մայիսն եկաւ և քեզ կը կանչէ,  
Կանչող ձայնին լսէ, այց ելիր, թռչնակ:

Թռիր, դե տարուան մէջ ուրախ չէ կեանքդ,  
Կեանքիդ մէջ աւելի է հառաչանքդ,  
Հառաչելով չե լցուիր քոյ բաղձանքդ,  
Բաղձալով չես կարող գտնել օժանդակ:

Օժանդակ վշտերիդ, դետես թէ վարդն է,  
Վարդն Ապրիլ, Մայիսի, Յունիսի զարդն է,

\*) Այս երգը կոչվում է շղթայահասց, որն իւրաքանչիւր  
տողն վերջին բառով սկսվում է հետևեալ տողը և շարու-  
նակում:

Զարդարուած բոյսերով միայն դրա խան է,  
Կրակոտի վարդից հոտ բուրէ անքանակ:

Քանակ չկայ սոխակ, գիտեմ, ցաւերուդ,  
Յաւերդ չեն պակսիր, զի վարդն է անզութ,  
Կթալով Խայաթդ վշտերիդ անսուտ,  
Անսուտ կերպով զովէ քեզ անուշ խօսնակ:



36


ԻՄ ՎԻՇՏՁ.



Ինչպէս չ'ըամ և չը սղամ, չը ողբամ,  
Մի հազուագիւտ անդրանիկ եմ կորուցեր,  
էր ինձ համար ամեն պտղից քաղցրահամ,  
Մասաղահաս բլբուլիկ եմ կորուցեր:

Այլ, եղե՛լ է մի ուրիշ մարդ ինձ նման,  
Որ ես արդէն ոչ մեռած եմ, ոչ կենդան,  
Քանանացի Յակոբին համանման,  
Յովսէփի պէս զեղեցիկ եմ կորուցեր:

Բաղդս անիրաւ որդիս տեսաւ ինձի շատ,  
Զ'նայելով՝ պէտքէ զրեմ ես զանգատ,  
Յաւ զզացի անբուժելի-անփարատ,  
Իբրև Գուրգէն Վարսենիկ եմ կորուցեր:



ԽԱՅԱԹ.

37

Օ Ր Ե Ր.



Ինչո՞ւ այդպէս արագ արագ անցնում էք  
Ամենացանկալի մանկական օրեր,  
Սև մազս սիպտակի շուտ փոխարկում էք,  
Կընծայէք ծերութեան աստիճան, օրեր:

Աւա՛ղ, չի սևանայ մազս ալեոր,  
Կսկսի նուազել ուժս օրէ օր,  
Կրկում են անձս իմ ցաւեր նորանոր,  
Յոյց կտան ճանապարհը մահուան, օրեր:

Ի՞նչ շահ ունի, կամ ի՞նչ օգուտ մահը ձեզ,  
Նման է աշխարհի մէջ ազահը ձեզ,  
Խայաթուս ունեցած թափուր գահը ձեզ,  
Միայն թէ մնացէք բաւական, օրեր:



38

ՓԱՌԱՍԷՐ ՄԱՐԻ.




Ինչո՞ւ ց ստիպուած պարոն, ամեն բանի իշխել կամիս,  
Գու քեզ իշխան կարծելով՝ անձնիշխանին իշխել կամիս  
Մշտապէս քոյ աննշան հարստութեան չնչին ուժով,  
Նրբամիտ և բանիմոց զիտնականին իշխել կամիս:

Հացկատակ, ընկերատեաց մարդիկ ժողովել ես մտող,  
Անբանի տեղ զնեյով, բանականին իշխել կամիս,  
Ձարդացած, ազատամիտ մարդկանց ոխերիմ թշնամի  
Անուանում ես, քանի որ այն շրջանին իշխել կամիս:

Որ տեսակէտից նայենք քոյ դործերդ՝ զարմանք է շատ,  
Ճիշտն ասած, մինչ զբացուող գերդաստանին իշխել կամիս,  
Բռնել ես այնպիսի դիրք, որ ամեն մարդ քեզն սիրէ,  
Բայց դու խորամանկօրէն մեր զրպանին իշխել կամիս:

Ի՞նչ արած, ճարահատեալ պէտքէ խոնարհինք հրամանիդ,  
Բռնութեան տակ զնեյով՝ պատուարժանին իշխել կամիս:

Խ Ա Յ Ա Ք .




Դ Ա Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն .

Լիրք հարուստներից լաւ են պատկառելի աղքատները,  
Նրբ կ'տեսնեմ ես նրանց սրտերը, սուրբ հաւատները,  
Անդադար աշխատում է խղճուկ մշակը իւր ուժով,  
Բայց լիովին չեն նրան վարձատրում ժլատները:

Մենք նրանց բողոքելու տեղակ՝ բողոքում են նոքա,  
Լսում են ականջներս անէծքները, գանդատները,  
Միշտ անարգում, ատուամեն, բողոքում են ու բամբասում,  
Մեղ զնեյով մեզ վերայ՝ թողած իրանց արատները:

Շէմքերին անկող հիւրը մէկ օր կը չօքի, ով Խայաթ,  
Եւ կ'տանի մարդկային ազնիւ ցեղն կաւաաները:



Ո Ղ Բ Ե Ր Գ . Հ Ա Ն Գ Ո Ւ Ց Ե Ա Ն . Ն Ե Ր Մ Է Ս Ս Պ Ա Տ Բ Ի Ա Ր Գ Վ Ա Ր Ժ Ա Պ Ն .  
Տ Ե Ա Ն Ի Մ Ա Հ Ո Ւ Ա Ն Ա Ռ Թ Ի Ի .



Խեղճ հայ ազգդ ում յանձնեցիր,  
Հրեշտակրօն էակ ներսէս,  
Ո՛հ, ո՛ւր կերթաս անուշազիր,  
Թողած թերափափազ ներսէս,  
Ել երբ պետքէ ճարենք քեզ պէս: <sup>1)</sup>

Չարթիր, տես Մասխար ծերուկ,  
Նստեր կուլայ իբրև մանուկ,

1) Ամենազն տանց վերջում կրկնէ չեղեալ տողը:

Յիշելով զորճերդ յատուկ,  
Գոռում է ա՛խ միակ Ներսէս....

Նոր 'ի նոր մտքեր հնարող,  
Տնտեսութեամբ կառավարող,  
Որք հայ ազգին մխիթարող  
Էիր մէկ ժամանակ Ներսէս....

Քեզանից բարենորոգում  
Սպասողներ կային բազում,  
Բայց ամենիս թողեր տրտում  
Տխուր, թշուառ վիճակ, Ներսէս....

Եկեղեցականներ կան շատ,  
Բայց չեն մէկը քեզ համեմատ,  
Ազգին ծառայող հարազատ  
Էիր վե՛հ օրինակ Ներսէս....

Վաստակի ամերից ուժգին,  
Սուգ սիրոցիր Հայաստանին,  
Իւրաքանչեւ հայի սրտին,  
Իրիր անշէջ կրակ Ներսէս....

Ներսէսները եղել են վե՛մ,  
Հայոց եկեղեցուն վսե՛մ,  
Մէկը մէկից յառաջադէմ,  
Ձունինք անընդունակ Ներսէս....

Բնութեան անբռնաբարելի  
Պարտքը վճարեցիր ձրի,

Հոգ կրեցիր մէջ աշխարհի,  
Գու պաշտելի հոգեակ Ներսէս....

Հայոց արև ծայրէ 'ի ծայր,  
Կարճես երկնից ընկել է վայր,  
Չկար քեզ պէս որդեսէր հայր  
Աշխարհում բովանդակ, Ներսէս....


Արժան է քեզ ոսկէ արձան,  
Վերան գրել Վարժապետէան,  
Անմոռաց մնայ յաւիտեան,  
Քոյ անուանդ հռչակ Ներսէս....

Ծնած օրիցդ մանկական,  
Նղար Հայ ազգին սիրական,  
Անջատուելով թողեր միայն,  
Լաց ու կոծ, աղաղակ Ներսէս....

Կամաւ Տեառն եկար աշխարհ,  
Թողած՝ կրկին կերթաս առ Հայր,  
Հանգիստ ոսկերացդ արդար,  
Նրջանկայիշատակ Ներսէս....

Երգել Խայթն եմ Ձահրիեան,  
Թոռն քաջ ազգին Արամեան,  
Կը յիշեմ քեզ մինչ յաւիտեան,  
Ո՛վ անմահ Նահատակ Ներսէս,  
Էլ երբ պէտք է ճարենք քեզ պէս:

1884 ամի 28 հոկտեմբերի. Տփլիս:



ԱՂԵՐՍ ԱՌ ՍԻՐԵԼԻՆ.



Սնդիրս առ իմ նազելի,  
 Գթոտ լեր, ձայն տուր անբազդիս,  
 Կամ երբեմն հաղորդէ մի՝  
 Ուրախալի լուր անբազդիս:

Ես քո մասին թշուառ վեճակ  
 Կրում եմ այսքան ժամանակ,  
 Քեզ յուսալով, յոյս իմ միակ,  
 Մի թողնեք օխուր անբազդիս:

Դեռ չեմ տեսած մէկ սիրահար,  
 Փափագն առած լիակատար,  
 Քո Խայաթն եմ, լեր բարերար,  
 Տուր սիրոյ համբոյր անբազդիս:



Մ Ի Ի Ս Տ Է Չ Է Տ.

Սնդրում եմ ո՞վ իմ ամենաազնիւ սիրական դու,  
 Ե՛կ, ե՛կ, տկար եմ ես,  
 Փափագ մի թողուր տեսնելու ղէմքդ սիրաբան դու,  
 Մահուան պաշար եմ ես:

Քեզանց ՚ի դատ էլ ուրիշ ո՞վ էր բարեկամ ինձ,  
 Կամ թէ ինձամտար.  
 Որ շուտ մոռացար ինձ բոլորովին պատուական դու,  
 Մի՞ թէ օտար եմ ես:  
 Նոր սիրտ ու հոգի պէտքէ քեզանով ունենամ ես,  
 Կարծիք չկայ երբէք.  
 Օգնեա՛, ո՞վ ղիցուհի, արի, անուամբ նոր նշան դու,  
 Քանզի անձար եմ ես:  
 Ամռան արեգակով չորացած, խանձած է սիրտս,  
 Ու էլ ծարաւի է.  
 Կենաց ջրերով ինձի զովացուր յաւիտեան դու,  
 Սաստիկ նիհար եմ ես:  
 Անշափ կարօտանօք քեզի տեսնել կամիմ, ո՞վ սէր,  
 Ինչպէս երիտասարդ.  
 Լսէ Խայաթուս ու շտապ արի երեան դու,  
 Լոյս աուր, խաւար եմ ես:




ԽՕՄԲ Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՅ.

Սնդրում եմ, յայանի արա, ի՞նչ նպատակ է հոգի ջան,  
 Որ դու ինձ մօտ չես գալիս շատ ժամանակ է հոգի ջան,  
 Զ՛լինի՞ մի զուր բանով ցաւ եմ պատճառել տկարս,  
 Իրաւի, թէ այդպէս է, ինձ թէ՛ կրակ է հոգի ջան:

Եթէ դու օրէնը ինձ մօտ քսան անգամ չ՛գայիր,  
 Կարծէի թէ աշխարհը իսկ աւերակ է հոգի ջան,

Բայց հիմա բոլորովին ինձ մոռացած ես կերևի,  
Չ'գիտեմ թէ արածդ ի՞նչ օրինակ է հոգի ջան:

Երանի այն օրը որ, ճշմարիտ սիրոյ նամակդ  
Կստանամ ու կը գոչեմ թէ՛ յիշատակ է հոգի ջան,  
Մինչ անգամ թէ բարեկից փոխանակ պարսաւ էլ գրես,  
Խայթթուդ մօտ բոլորովին ընդունակ է հոգի ջան:



Շ Ո Ւ Շ Ա Ն .

Տաղկիր դու շուշան, ցանկալի դարունն եկաւ անցաւ,  
Դարձեալ անուշիկ հովերի հնչինն եկաւ անցաւ,  
Տեսնումեմ ամեն ծաղկկը բողբոջ ու կանանչ է,  
Դեռ դու մնացել ես, աւանջ, աշունն եկաւ անցաւ:

«Յոյս չիք շուշանին ծաղկելու», շատերն ասումեն ինձ,  
«Քանզի ծերացել է, նորա արբունն եկաւ անցաւ»,  
Յայտնիր քոյ նորոզման օրդ, սիրահարիդ յոյս տուր,  
Անդադար է նա, աչքերիցը քունն եկաւ անցաւ:

Խնդիրը Խայթթուս սա է վախ մի՛ մնար, բացուիր,  
Զասնն թէ միայն իւր մի լոկ անունն եկաւ անցաւ:



Ի Մ Վ Ի Ճ Ա Կ Ը .

Վայճերիցս փախչում է անշէջ կրակս տեսնողը,  
Ցաւում է-ափսոսում է դառն վիճակս տեսնողը,  
Ողբալով արտասվում է մանուկ հասակս տեսնողը,  
Մինչ քարասիրտ որ լինի, կուլայ կամակս տեսնողը,  
Սարսափում է վշտերով պատած դիմակս տեսնողը, <sup>1)</sup>  
Յփշում է ու վայ կարգում դատարկ քսակս տեսնողը: <sup>2)</sup>

Այն օրը թող կորսուի բոլորովին, որ ես ծնայ,  
Օրերում, ամիսներում, տարիներում չ'հաշուի նա,  
Զրկուի նա երկնային յոյսերից ու խաւար մնայ,  
Որ չ'փակեց իմ մօրս արգանդի դուռը ինձ վերայ:

Յորի պէս վշտեր ունիմ, սպեղանին թող ինձ բերի,  
Ով որ ունի դորանից, քանզի կարօտ եմ անտուգանի,  
Կարծում եմ թէ էլ չկայ ինձի նման ցաւոյ դիմի,  
Ամեն բանով տկար եմ, ոչ մի կերպով չեմ անթերի....

Շատ լաւ էր ու երանի, թէ չը ծնէի աշխարհին,  
Ո՛հ, ի՞նչ մեծ երջանկութիւն, որ չը անէի աշխարհին,  
Ես տկար Խայթթին եմ, է՛հ, ի՞նչ անէի աշխարհին,  
Որ ոտքից մինչեւ գլուխ պարծանք լինէի աշխարհին....



1) 2) Ամենայն տանց վերջում կրկնէ չեղեալ տողերը:

ՀԱՅՐԵՆԵԱՅ ԿԱՐՈՏ ՄԻՐՏ:



Հայրենեայ կարօտով տոչորուող սիրտս,  
Քաղցրախօս սիրահար սխակ է՞ դառել,  
Չի՞ զլանայ թափել արիւնս, քիրտս,  
Որովհետեւ անշէջ կրակ է՞ դառել:

Այն քաշկերով մոմի նման հալուեցայ,  
Դեռ չը ծաղկած՝ ուռնեու պէս ծալուեցայ,  
Այլոց հաւատարմի ես սխալուեցայ,  
Իմ պատճառով սիրտս առակ է՞ դառել:

Մինչ երբ պէտք է լինիս, իբրև հնութիւն,  
Չէ՞ որ քոյ մէջդ կայ հաստատ բնութիւն,  
Ալեկոծեալ կատղած ծովում երերուն,  
Խայաթ, սիրտդ կտորած նաւակ է՞ դառել:



Հանապաղ երջանիկ, թարմ, նորաբողբոջ, անթառամ սէրն է,  
Տխուր, սև սրտերին ցնծում բերող ու բարեկամ սէրն է,  
Բժիշկը դասն առած դատախարակից զեռ աւարտած չէ,  
Մեր անբոյժ վէրքերը փրկող-փարատող յարաժամ սէրն է:

Ծնողքը որդիերանց որքան սիրով ինամատար լինին,  
Ես այսքան քննած եմ, որ ամենից բաղմանամ սէրն է,  
Գիշեր, զօր անդադար ընթեռնուում եմ թերթերը սուրբ գրքի,  
Միայն թէ անսնում եմ որ, միշտ որ զլուին բանամ սէրն է:

Չկայ բան աշխարհում երբէք, որ լինի հաճելի քմբին—  
Խայաթուս, բայց հաճոյ պտղից, խորիսխից քաղցրահամ,  
սէրն է:



Քաճանչ արեգին զեռ չէր երևում,  
Անխոնջ զիւղացիք զարթեցան քնից,  
Վեր առան պատից, կախած զերանդիք,  
Շտապում էին դաշտ զնալ տանից:

Ամառուայ մեղմիկ քամին փչում էր,  
Ոսկի հասկերը տատանում-շարժում,  
Խումբ խումբ զիւղացիք-մարդ, կին միասին  
Մտնում են արտը ու զործ սկսում:

Մարդը հնձում է փայլուն գերանդով,  
Առոյգ զեղջիւհուհին խուրձեր կապտում,  
Նրդում է-սուլում արտուան անուշիկ,  
Եւ մեր հնձուորի հողին է հրձկում:

Մէկ կողմից բարդը բարձրում է սայլին  
 Ու տարվում զէպի տուն-դրան առաջ,  
 Փռում են կայք, կայսում երգելով,  
 Թեղ անում, բամում քրտնած՝ բացալանջ:

Յարդը կառափով քաշում են մարագ,  
 Ժիր եզնուկներին պաշար ձմերան,  
 Գարին ու ցորեն մաղած-խտակած,  
 Կրում ու լցնում են շտեմարան:

Բնութեան առատ պարզեամբ բոլոր  
 Պիտոյքներից, երբ ապահովում են,  
 Իսկ այնուհետև ուրախ ու զուարթ,  
 Ամբողջ ձմեռը խաղալ ապրում են:

Խ Ա Յ Ա Թ .



Մ Ի Ի Խ Է Ն Մ Է Ձ .

**Մ**ի լինիր, իմ սիրելի, դու ինքնահաւան մի՛ լինիր,  
 Խոնարհի, պինդ-անառիկ ամրոցի նման մի՛ լինիր,  
 Բամբասանք մի զիտենար ու վատաբերան մի՛ լինիր,  
 ձանաչէ մարդկութիւնը, անասուն անբան մի՛ լինիր,  
 ձշմարիտ ընկերութեան խմբիցը բաժան մի՛ լինիր,  
 Ձեմասում թէ բարութեան համապատասխան մի՛ լինիր:

Գլուխդ արբեցութեան տալով՝ գինևտուն մի սիրեր,  
 Պատկառանքդ մի ձգեր, թղթախաղութիւն մի սիրեր,  
 Անարգէ, խարդախութեան հետևող մարդուն մի սիրեր,  
 Կամակոր մարդը բնաւ չի լինիր գիտուն, մի սիրեր,  
 Անվայել-ապօրինի կնապահութիւն մի սիրեր,  
 Բարութեան լեր հետևող, անբարոյական մի՛ լինիր:

Այս լուսաւոր դարի մէջ մի մնար խաւար հոգի ջան,  
 Ջանք արա ստանալու գիտութեան հանձար հոգի ջան,  
 Որովհետև չի մնար գիտունը շուար հոգի ջան,  
 Սրբազան պարտք է լինիլ ներկայիս յարմար հոգի ջան,  
 Որոնէ քոյ ցաւերուդ փարատութեան ճար հոգի ջան,  
 Մեռնողին դու սև դադալ՝ ծնունդին օրրան մի՛ լինիր:

Մարդկութեան ապարիզեց դուրս մի գայ բնաւ՝ սիրելի,  
 Ընկերութեան մէջ ունեցիր բարի համբաւ՝ սիրելի  
 Յաւում եմ ես քոյ մասին, կամենալով լաւ՝ սիրելի,  
 Չի մնայ թղթի վերայ գրուած տառը սեաւ՝ սիրելի,  
 Թանգ օրերդ մի դներ ծուլութեան գրաւ՝ սիրելի,  
 Ջանք արա, լեր ապահով, օգնութեան արժան մի՛ լինիր:

Մի խզեր օրինաւոր ամուսնութեան կապը ամուր,  
 Դու քեզնով լեր բաւական, քոյ սահմանից դուրս մի գայ զուր  
 Մի խարուիր, ներկուած է յաւերժահարսը, չէ մաքուր,  
 Նիւթապէս, բարոյապէս կստանաս փասս-թուք ու մուր,  
 Կը մնաս անբուժելի ցաւով պատած ճարակտուր,  
 Քոյ կեանքդ թանգ համարէ, դու քեզ դաւաձան մի՛ լինիր:

Նախապէս զգուշացիր և լաւերից առ օրինակ,  
 Ժլ մնայ ականջումդ իրատս ամեն ժամանակ,

Կանցկենան թանգ օրերդ, ոսկի ժամերդ շարունակ,  
Այժմեանից պէտք է ջանաս ձեռք բերելու բարի վիճակ,  
Համաձայնիր Խայաթուս, զղջն արարքիցդ, հոգեակ,  
Չդատիր արիւթեան ու թշուառական մի՛ լինիր:



50

Ղ Օ Շ Մ Ա Յ.



Մի ժամանակ թեթև, առանց աղմուկի,  
Նրջում էր աջողակ անիւր բաղդի,  
Այժմ փոխուաւ հին ճանչող ճախրակի,  
Ի՞նչ է արդեօք ինձ հետ կոխը բաղդի:

Բաղդի վրայ յոյս մի՛ դներ դու ով մարդ,  
Փախչում է յարածամ, լարելով թակարդ,  
Մէկ հաշուելով ծերուկ թէ երիտասարդ,  
Այսպէս է սարդեր-պատիւր բաղդի:

Ո՛վ Խայաթ, այսպէս է գործը աշխարհին,  
Իանդատվում է, թէ հարցանես հանձարին,  
Նրբեմն ինձ մտ է, երբեմն օտարին,  
Չը հասկացայ երբէք պատիւր բաղդի:



51

Ա Ն Մ Ի Թ Ա Ր Ո Ւ Թ Ի Ն.



Մէկ օրս մէկ տարի է դառել ինձի,  
Ստար աշխարհի մէջ մտիթար չունիմ,  
Վայ կտան վիճակիս, ոչ թէ երանի,  
Քանզի իմ ցաւերուս դեղ ու ճար չունիմ:

Բազմանում է վերքս, վիշտերս, խոցս,  
Հետ զհետ բարդվում է կրակս, բոցս,  
Սչքերս արտասոււնք, ձեռքերս ծոցս,  
Կը շրջիմ թափառեալ, մի դադար չունիմ:

Մշտապէս ուրախ սիրտս տխուր է արդէն,  
Այրվում է կարօտով, իսկ հուր է արդէն,  
Յոյս չէք փրկուելու, 'ի զուր է արդէն,  
Խայաթս Փրկչից 'ի զատ բարերար չունիմ:



52

Օ Ր Օ Ր Ո Ր Գ Ե Կ Ի Ս.



Մի լաց լինիր, սիրուն որդեակ,  
Իմ անուշիկ, իմ աղանեսակ,  
Ո՞վ խանդարեց քունդ քաղցրիկ,  
Որ չես քնիր հանդարտ, հեղիկ:

Ահա ես քեզ կասեմ օրօր,  
 Հանգիստ քնիր հոգոյս հատոր,  
 Սիրտս մաշեց քոյ ժորմօքդ,  
 Հեկեկանքդ ու բողբոջդ:

Գիտեմ, դու խաղալ ես ուզում,  
 Դրա համար ես լաց լինում,  
 Ես կ'լցնեմ քոյ կարօտը,  
 Ահա մերձ է առաւօտը:

Դեռ կաթ ծծիր սննդարար,  
 Փակագդ ան լիակատար,  
 Որ քնանաս հանգիստ-խաղաղ,  
 Ու վերկենաս գեղածիծաղ:

Մինչ չէ գտած քեզ բաղդը սեաւ,  
 Անուշ որդիս, մի՛ լար բնաւ,  
 Կը մեծցնեմ քեզ փափկասուն,  
 Որ դու դառնաս կտրիճ-հասուն:


Բայց աշխարհի ցաւը յայնժամ,  
 Քեզ ցոյց կտայ ամէն անգամ,  
 Թէ ինչ սև օրեր պիտի գան,  
 Քոյ առջևդ, իբր ախոյեան:

Ուրեմն դու մի լար հիմայ,  
 Դեռ քոյ լացիդ ժամանակ կայ,  
 Դուն էլ ինձպէս ցաւոց գերի,  
 Պէտք է դառնաս, ողորմելի:

Այժմ չէք ընկեր մտերիմ,  
 Մահուան մատնող են ռեսերիմ,  
 Անիծելով դարը այժմեան,  
 Պէտք է մանեա սառ գերեզման:

Այս խրատը ականջիդ օլ  
 Լինի, որդեակ, զգուշացնող,  
 Քեզ մաղթումեմ երջանիկ օր,  
 Խաղաղ կեանք, ասելով օրօր:

ԽԱՅԱԹ.



ինչ երբ չը փորձուիս միամիտ սիրտս,  
 Խաբերային կեանքդ հաստատ կընծայես,  
 Ամեն բան կարծելով ձշմարիտ, սիրտս,  
 Բոլոր ունեցածդ առատ կընծայես:

Կեղծաւորը չի լինիր քեզ բարեկամ,  
 Մի սպասիր երբէք նրանից ինամ,  
 Խաբուսիկ խօսքերով քեզ քա՞նի անգամ,  
 Խաբել են, դու դարձեալ հաւատ կընծայես:

Չը լսելով Խայաթուս պատուիրանին,  
 Խորհուրդ կտաս ամեն մի անպիտանին,

Մինչ անգամ հողիդ, դու քաղցրաբանին  
Հաւատարով, իբր հարազատ կը՛ծայես:



54

ԽՕՍԻ ԸՆԴ ՍԻՐԵԼՈՅՆ.



ինչ երբ իմ անուշիկ սիրականս,  
Խռով մնաս ինձնից, հողի ջանս,  
Ափսոս արի, ափսոս, սիրաբանս,  
Աշխարհը տարածուեց պաղատանս:

Առանց քեզի անմխիթար եմ ես,  
Անշափ վերօք անդեղ-անձար եմ ես,  
Ինչ որ կամիս, ասա կատարեմ ես,  
Ծառայդ եմ հողուով անզուգականս:

Ի՞նչ եմ արել, զանգատուում ես ինձանից,  
Նե զուր տեղը անջատուում ես ինձանից,  
Չէ՞ որ դու գնահատուում ես ինձանից,  
Ո՞վ է տալիս քեզ իմ զովասանս:

Ա՛խ, ո՞ւր է, ո՞ւր պատանի հասակս,  
Առար ու չը տուիր իմ հողեակս,  
Քեզանից եմ ուզում թանգ ժամանակս,  
Մինչ երբ չ'լսես իմ աղաչանս:


Սիրականը այդքան սիրահարին,  
Երբէք չի տայ ասնջան սիրահարին,

Մահ չի կամի արժան սիրահարին,  
Այդ ի՞նչ է արարքդ հողեհանս:

Մի՞թէ դու յօժար ես մնամ այսպէս,  
Մորմոքամ, աղերսեմ ու լամ այսպէս,  
Բաւ է թողնես ինձ՝ անինամ այսպէս,  
Կարեկցիր ու խղճա նեղութեանս:

Լաւ է մահը ինձ այսպիսի կեանքից,  
Քանի չեմ ազատ դառն տղերսանքից,  
Գթան, ազատիր ինձ հառաչանքից,  
Գղուանքի վոխիր մութ գերեզմանս:

ԽԱՅԱԹ.



55

Մ Ի Ի Ի Ի Ն Մ Ի Զ.



ինչ երբ իմ նազելիս, դու աղաչանս չ'լսես,  
Լաց ու կոծ, աղաղակս և հառաչանս չ'լսես,  
Քեզ բարի կամենալս, սիրոյ պոյմանս չ'լսես,  
Արժան է այս խնդիրը, իմ սիրականս չ'լսես,  
Բարոյական խրատս ու պատուիրանս չ'լսես,  
Ո՞վ ասաց, ո՞վ խրատեց, որ հրամանս չ'լսես:

Ահա ութ տարին լրիւ կեանքս մաշուեցաւ քեզ համար,  
Նրջելով երկրէ երկիր անօթի ծարաւ քեզ համար,  
Մինչ զլիսումս էլ չ'մնաց, ո՞հ, մի մուգ սեւաւ քեզ համար,

Լսում են ականջներս ամեն օր պարսաւ քեզ համար,  
Բոյց դարձեալ ամեն րոպէ ես ուզում եմ լաւ քեզ համար,  
Մի՞ զուցէ խաբուես այլոց, ինձ սիրաբանս չլեսս:

Օր լինի որ յիշես ինձ, արարքէդ զղջաս սիրելի,  
Մեծ կորուսաներ ունեցողի պէս նստիս ու լաս, սիրելի  
Ինչպէս որ ես ինձ հիմա, նոյնպէս քեզ վայ տաս սիրելի,  
Յաւերդ փարատելու դռնէ դուռ ման գաս սիրելի,  
Զը գտնես ոչ դեղ ու ճար և ոչ լաւանաս սիրելի,  
Հայցելով ինձնից հնար, բայց պատասխանս չլեսս:

Սիրոյդ անչէջ կրակով այրուիմ մինչ երբ նազելի,  
Զը գիտես սէրը ինչ է, որ տանես խնամ սիրելի,  
Քա՞ր է քո սիրտը միթէ, տանջում ես ինձ աններելի,  
Մի՞ լինիր, ո՞վ անիրաւ, մի՛ լինիր այլոց հայելի,  
Քոյ սիրոյդ սլաքը սուր ուղղել ես սրտիս աւելի,  
Որպէս զի շուտ մեռանիմ, որ պաղատանս չլեսս:

Ի՞նչ անեմ, ո՞վ անիրաւ, ո՞ւմ դնամ դանդաս քեզանից,  
Իեռ ինձի չէր պատահած ջոկ անհարազատ քեզանից,  
Հակառակ, այս ցաւերը կրում եմ հաստատ քեզանից,  
Կարծում էի թէ չկայ ուրիշ պայազատ քեզանից,  
Թող մեռանիմ Խայտիս, դէթ լինիմ ազատ քեզանից,  
Զը լեսս, մինչ անուես, կտակարանս չլեսս:



**Ս**ինչեւի երբ այսպէս ննջած մնաս դու ո՞վ հովիւ,  
Ո՞ր է այն քոյ սեփական հօտըն, որ էր միշտ բազմաթիւ,  
Գաշտերդ, արօտներդ օտարք տիրեցին, ո՞հ, ափսոս,  
Թող տուիր խաշինքներդ, որ շրջում են ցաք ու ցրիւ:

Անթեան մանգալով պանդուխտի պէս խղճուկները,  
Որ հօտի մէջ էլ գնան, երբէք չունին յարգ ու պատիւ,  
Մինչ ցայժմ բնակուած են փարախներդ սողունները,  
Անխնայ տասպաններիդ վերայ շրջում են անհաշիւ:

Մաշուել են կոխկոտուելով բոլոր տառերըն, ո՞վ Խայտիթ,  
Կարդալու արձանագրերըն երևում են հազիւ:



**Յ**ուսարեկ, տխուր նստած միայնակ,  
Մինչ երբ դու ողբաս, մայր իմ հարազատ,  
Սոյ քոյ ազէխարշ արտասունքները,  
Հայումնաշ արին մեր սիրտը հաստատ:

Ո՞վ խլեց արդեօք քոյ դաբնեայ պսակ,  
Քոյ փառք ու պարծանք, քոյ կեանք երջանիկ,

Քոյ առոյդ հասակի, քոյ դէմք դեղանի,  
Եւ հրապուրիչ լեզուդ անուշեկ:

